



## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ COVID-19-Ի ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հանրային Առողջապահության Հրամանը Շտապ Կարանտինի Վերաբերյալ Վերանայված Հրամանը թողարկվել է 2020թ.-ի Դեկտեմբերի 17-ին:

Այս Հրամանը փոխարինում է Հանրային Առողջապահության Շտապ Կարանտինի Վերաբերյալ 2020թ.-ի Հոկտեմբերի 26-ի Հրամանին.

Այս Հրամանն ուժի մեջ է՝ մինչև Առողջապահության Պատասխանատուի կողմից չեղյալ հայտարարելը:

### ՈՎ ՊԵՏՔ Է ՀԵՏԵՎԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ԱՅՍ ՀՐԱՄԱՆԻՆ

Բոլոր անձանցից, ովքեր բնակվում են Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Իրավասության շրջանակում և սերտ շփում են ունեցել որևէ մարդու հետ, ում մոտ ախտորոշվել է COVID-19 (հիմնվելով COVID-19 ախտորոշիչ [վիրուսային] թեստի դրական արդյունքի վրա), պահանջվում է ինքնակարանտին պահպանել և հետևել սույն Հրամանի բոլոր հրահանգներին: Սա արվում է այն պատճառով, որ այդ շփումը նրանց COVID-19 զարգացնելու և տարածելու վտանգի տակ է դնում:

### ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ՁԵԶՆԻՑ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՍԵՐՏ ՇՓՈՒՄ ԵՔ ՈՒՆԵՑԵԼ ՄԻ ՄԱՐԴՈՒ ՀԵՏ, ՈՎ ՈՒՆԻ COVID-19

COVID-19-ի տարածումը կանխելու համար, Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուն («Առողջապահության Պատասխանատու») սույնով պահանջում է ձեզ անհապաղ.

- a) Ինքնակարանտինում մնալ և
- b) Հետևել սույն Հրամանի բոլոր ցուցումներին:

### ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

#### 1. Ինքնակարանտին պահպանեք, որպեսզի նվազեցնեք COVID-19 տարածելու վտանգը

Ձեզնից պահանջվում է ինքնակարանտինում մնալ (առանձնանալ մյուսներից), որովհետև հավանական է, որ դուք շփվել եք COVID-19-ով վարակված անձի հետ: Եթե վարակված եք, քանի որ դուք կարող եք հեշտորեն փոխանցել COVID-19 մյուսներին, ներառյալ՝ այն մարդկանց, ովքեր ծանր հիվանդանալու վտանգի տակ են, ինչպիսիք են՝ ավելի տարեցները և [առողջական խնդիրներ](#) ունեցողները:

Դուք պետք է կարանտին պահպանեք (մնաք տանը կամ այլ բնակավայրում), որպեսզի նվազեցնեք COVID-19 տարածելու վտանգը: Երբ դուք կարանտինի մեջ եք, դուք չեք կարող հեռանալ ձեր կարանտինի վայրից կամ մուտք գործել որևէ հանրային կամ մասնավոր վայր, բացառությամբ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու կամ COVID-19 թեստ հանձնելու (ինչը խորհուրդ է տրվում սերտ շփումներին) նպատակով:



*Սակայն, էթե դուք առողջապահության կամ առաջին արձագանքման ոլորտի աշխատող կամ սոցիալական ծառայությունների աշխատակից եք (ով դեմ առ դեմ աշխատում է հաճախորդների հետ երեխաների բարեկեցության համակարգում կամ աջակցող բնակության հաստատություններում) և ախտանիշներ չունեք (ասիմպտոմատիկ), ձեզ կարող է թույլատրվել վերադառնալ աշխատանքի, էթե ձեր գործատուն աշխատակազմի պակաս ունի: Դուք պետք է հետևեք գործատուի կողմից հաստատված աշխատանքի վերադառնալու արձանագրություններին: Երբ էական աշխատանք չեք կատարում, դուք պետք է ենթարկվեք կարանտինի սույն հրամանին:*

Սերտ շփումների (կոնտակտների) սահմանումը. Սույն Հրամանի նպատակների համար «Սերտ շփումներ» (կոնտակտներ) համարվում են բոլոր այն մարդիկ, ովքեր շփվել են դրական ախտորոշիչ (վիրուսային) COVID-19 ունեցողի («հիվանդ») հետ՝ նրա վարակիչ եղած ժամանակահատվածում\*:

- a) Անձ, ով ձեզնից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա է գտնվել ընդհանուր 15 րոպե կամ ավելի տևողությամբ 24 ժամվա ընթացքում, կամ
- b) Անձ, ով չպաշտպանված շփում է ունեցել ձեր մարմնի հեղուկների և/կամ արտազատուկների հետ, օրինակ՝ նրա վրա հագացել կամ փոշտացել եք, նույն սպասքից եք օգտվել, ձեր թքի հետ է շփվել կամ խնամք եք տրամադրել նրան՝ առանց համապատասխան պաշտպանիչ հանդերձանքի կիրառման:
- \* COVID-19 ունեցող անձը համարվում է վարակիչ ախտանիշներն ի հայտ գալուց 2 օր առաջ և մինչև այն պահը, երբ նրանից այլևս չի պահանջվում մեկուսանալ (ինչպես նկարագրված է «[Տնային Մեկուսացման Հրահանգներ COVID-19-ով Վարակված Մարդկանց Համար](#)»-ում): COVID-19 ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան ունեցող, բայց ախտանիշներ չունեցող մարդը համարվում է վարակիչ իր առաջին դրական թեստը հանձնելուց 2 օր առաջ և այդ թեստը հանձնելուց հետո 10 օր:

Ինքնակարանտինի ցուցումներ. Ձեզնից պահանջվում է հետևել “COVID-19-ով Վարակվածների Սերտ Շփումների Համար Նախատեսված Տնային Կարանտինի Հրահանգներին”, որոնք հասանելի են [անգլերեն](#), [իսպաներեն](#) և [այլ լեզուներով](#)՝ <http://ph.lacounty.gov/covidquarantine>:

Ինքնակարանտինի տևողությունը.

1. Ձեզնից պահանջվում է ինքնակարանտին պահպանել (առանձնանալ մյուսներից) վարակված անձի (հիվանդի) հետ ձեր վերջին շփումից հետո 10 օր: Դուք կարող եք ավարտել ձեր կարանտինը 10 օր հետո, եթե՝ Ձեզ մոտ չեն առաջացել COVID-19-ի [ախտանիշներ](#), ԵՎ եթե հետևում եք հետևյալ կանխարգելիչ միջոցներին.
2. Վարակված անձի հետ ձեր վերջին շփումից հետո **11-ից 14-րդ օրը** դուք պետք է.
  - a. **Լրացուցիչ զգույշ լինեք**, որպեսզի նվազեցնեք COVID-19-ի տարածումը, ներառյալ **այլոց միջավայրում դեմքի ծածկոց կրելը**, **մյուսներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահելը** ԵՎ **ձեռքերը հաճախ լվանալը**:
  - b. Ծարունակեք ամեն օր վերահսկել ինքներդ ձեզ COVID-19-ի ախտանիշներից:



## 2. Եթե Ձեզ Մոտ Չարգանան COVID-19-ի Ախտանիշներ և/կամ Ստանաք Ախտորոշիչ (Վիրուսային) Թեստի Դրական Պատասխան

Եթե ձեր կարանտինի ընթացքում որևէ պահին ձեզ մոտ զարգանան COVID-19-ի որևէ [ախտանիշներ](#), դուք պետք է ինքնամեկուսանաք և կապ հաստատեք ձեր բուժաշխատողի, կլինիկական խորհրդատվական գծի կամ հեռաբժշկության մատակարարի հետ՝ բժշկական գնահատման համար և COVID-19-ի թեստավորում կազմակերպեք:

- Եթե COVID-19-ի ձեր թեստի պատասխանը դրական է, կամ եթե ձեր բժշկական մատակարարը կարծում է, որ դուք COVID-19-ով եք վարակված, դուք պետք է հետևեք COVID-19-ի վերաբերյալ Լոս Անջելես Շրջանի «[Հանրային Առողջապահության Շտապ Մեկուսացման Հրամանին](#)» և «COVID-19-ով Վարակված Մարդկանց Համար Տնային Մեկուսացման Հրահանգներին», որոնք հասանելի են [անգլերեն](#), [իսպաներեն](#) և [այլ լեզուներով](#)՝ <http://ph.lacounty.gov/covidisolation>:
- Եթե ձեր COVID-19 թեստի պատասխանը բացասական է, և/կամ ձեր բժշկական մատակարարը կարծում է, որ դուք COVID-19-ով վարակված չեք, դուք պետք է ավարտին հասցնեք կարանտինի ձեր շրջանը և մնաք տանը, մինչև առնվազն 24 ժամ ջերմություն չունենաք՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման:
- Եթե չեք թեստավորվում, դուք պետք է մեկուսանաք առնվազն 10 օր՝ սկսած ձեր ախտանիշների սկսվելուց և մինչև ձեր ջերմության վերացումից առնվազն 24 ժամ անց՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման:

### ՀՐԱՄԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Մույն Հրամանի նպատակն է դանդաղեցնել Կորոնավիրուս Հիվանդություն 2019-ի (COVID-19) տարածումը, պաշտպանել ավելի բարձր վտանգի տակ գտնվող անձանց և պաշտպանել առողջապահական համակարգը՝ շտապօգնության սենյակներում և հիվանդանոցներում հիվանդության դեպքերի աճից: Վիրուսը կարող է հեշտությամբ տարածվել միմյանց հետ սերտ շփման մեջ գտնվող մարդկանց միջև:

Յուրաքանչյուր ոք հիվանդանալու վտանգի տակ է, բայց որոշ մարդիկ ավելի ծանր հիվանդանալու (ներառյալ՝ թոքաբորբը կամ օրգանների անբավարարությունը) կամ մահվան վտանգի տակ են՝ նրանց տարիքի, ֆիզիկական վիճակի և/կամ առողջական դրության պատճառով:

Մույն Հրամանը հիմնված է ներկայումս հայտնի և մատչելի գիտական ապացույցների և լավագույն փորձի վրա: Մեկուսացումը և կարանտինը խորհուրդ են տրվում Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների (CDC) և հանրային առողջապահության այլ մասնագետների կողմից՝ որպես COVID-19-ի տարածումը կանխող ապացուցված ռազմավարություն:



**ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուի այս Հրամանը ստեղծվել է Կալիֆոռնիայի Առողջապահության և Անվտանգության Օրենքների 101040, 101085, 120175, 120215, 120220, և 120225 բաժինների իրավասության ներքո: Առողջապահության Պատասխանատուն կարող է հավելյալ գործողություն(ներ) ձեռնարկել, որոնք կարող են ներառել քաղաքացիական կալանք կամ պահանջել տվյալ անձին մնալ առողջապահական հաստատությունում կամ այլ վայրում՝ պաշտպանելու հասարակության առողջությունը, եթե այս Հրամանին ենթակա անձը խախտի կամ չենթարկվի սույն Հրամանին:

**ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

- COVID-19-ով Վարակվածների հետ Սերտ Շփումների Տնային Կարանտինի Հրահանգներ <http://ph.lacounty.gov/covidquarantine> (անգլերեն և այլ լեզուներով) <http://ph.lacounty.gov/covidcuarentena> (իսպաներեն):

Տեղեկատվության համար, եթե դուք ստացել եք COVID-19-ի դրական ախտորոշիչ (վիրուսային) թեստ, և/կամ բուժաշխատողը կլինիկորեն կասկածում է, որ դուք վարակված եք COVID-19-ով՝

- Տնային Մեկուսացման Հրահանգներ COVID-19-ով Վարակվածների Համար. <http://ph.lacounty.gov/covidisolation> (անգլերեն և այլ լեզուներով) <http://ph.lacounty.gov/covidaislamiento> (իսպաներեն)
- Շտապ Մեկուսացման Վերաբերյալ Հանրային Առողջապահության Հրաման. [http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO\\_Coronavirus\\_Blanket\\_Isolation.pdf](http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Isolation.pdf) (անգլերեն) և [http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO\\_Coronavirus\\_Blanket\\_Isolation-Armenian.pdf](http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Isolation-Armenian.pdf) (հայերեն)

**ՀՐԱՄԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Եթե այս Հրամանի հետ կապված հարցեր ունեք, զանգահարեք Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Վարչություն՝ (833) 540-0473 հեռախոսահամարով:

**ՀՐԱՄԱՅՎՈՒՄ Է.**

**Մոնսուր Դեյվիս, M.D., M.P.H.**

Առողջապահության Պատասխանատու,  
Լոս Անջելես Շրջան

12/17/2020

**Ամսաթիվ**